

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ  
ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ

2020

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ

2020

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Բայբուրդյան

Գրախոսող՝ պ.գ.թ. Լ. Հովսեփյան

Ձեռնարկը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Գիտաքրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Նավասարդյան Ն. Ս.

Կովկաս-կասպյան տարածաշրջանը միջազգային հարաբերությունների համատեքստում: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Ն. Նավասարդյան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն: Պատ. խմբ.՝ Վ. Բայբուրդյան, «Պրինտոգրաֆ» հրատ., 2020., 36 էջ:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկն ընդգրկում է Կովկաս-կասպյան տարածաշրջանի հետխորհրդային շրջանի պատմության և աշխարհաքաղաքականության հիմնահարցերը: Ձեռնարկում տեղ են գտել դասընթացի թեմատիկ նկարագրությունը, մասնագիտական գրականությունը, քննական հարցաշարը, մագիստրոսական աշխատանքների թեմաները:

Ձեռնարկը նախատեսված է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Արևելագիտություն» մասնագիտությամբ մագիստրատուրային ուսանողների և տարածաշրջանով զբաղվող մասնագետների համար:

INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER OF THE  
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONAL ACADEMY OF SCIENCES THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

NAZELI NAVASARDYAN  
THE CAUCASUS-CASPIAN REGION IN THE CONTEXT OF  
INTERNATIONAL RELATIONS

Educational-Methodological Manual

YEREVAN

2020

**Ղասընթացի արդիականությունը**

«Կովկաս-կասպյան տարածաշրջանը միջազգային հարաբերությունների համատեքստում» հատուկ դասընթացի շրջանակում ներկայացվում և քննարկվում են Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանի ժամանակակից աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հիմնախնդիրները, տարածաշրջանի հասարակական-քաղաքական գործընթացները, ինչպես նաև միջազգային հարաբերություններում տարածաշրջանի դերը և նշանակությունը, որի ուսումնասիրությունն ունի գիտական, քաղաքական և գործնական կարևոր նշանակություն:

Կովկաս-կասպյան տարածաշրջան հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել ԽՍՀՄ փլուզումից հետո և բավական լայն տարածում է գտել միջազգային հարաբերություններում և քաղաքագիտական վերլուծություններում, ժամանակակից գիտական գրականության մեջ, սակայն աշխարհագրական այդ տարածքի հստակ, միասնական սահմանումը, որն ընդունելի կլինի գիտական հանրային կողմից, դեռևս տրված չէ:

Կովկաս-կասպյան տարածաշրջանի ճշգրիտ սահմանների բնագծումը մեծապես բարդանում է աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական փոխկապակցված բազում գործոնների պատճառով: Ֆիզիկաաշխարհագրական տեսանկյունից Կենտրոնական Եվրասիայի սրտում գտնվող այս տարածաշրջանն ընդգրկում է Կովկասի ու Կասպից ծովի ավազանի ենթատարածաշրջանները: Քաղաքական և աշխարհագրական սահմանների առումով՝ Կովկասն ընդգրկում է Հյուսիսային Կովկասը, որը ՌԴ կազմում է և Հարավային Կովկասը կամ Այսրկովկասը, որի կազմում են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները: Կասպյան ենթատարածաշրջանի մեջ են մտնում այն երկրները, որոնք անմիջական էլք ունեն դեպի Կասպից

ծով՝ Ռուսաստանը, Իրանը, Թուրքմենստանը և Ղազախստանը: Այսպիսով, աշխարհագրորեն Կովկաս-կասպյան տարածաշրջանը Սևծովյան և Կենտրոնասիական տարածաշրջանները միմյանց կապող տարածքն է: Կասպից ծովը այն փաստացի բաժանում է երկու ենթահամակարգերի. արևմտյան՝ ծովին հարող կովկասյան, և արևելյան՝ մերձկասպյան-կենտրոնասիական շրջանների:

Գիտական գրականության մեջ Կովկաս-կասպյան տարածաշրջանը հաճախ ներառում է նաև Կենտրոնական Ասիայի երկրները, քանի որ Կասպյան ենթատարածաշրջանի կազմում են կենտրոնասիական երկու երկրները՝ Ղազախստանն ու Թուրքմենստանը: Այս մոտեցումը մեր կողմից նույնպես ընդունելի է, քանի որ թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ քաղաքակրթական, թե՛ սոցիալ-մշակութային և թե՛ պատմական զարգացման տեսանկյունից Կասպյան և Կենտրոնասիական ենթատարածաշրջանները՝ որպես Արևելքն Արևմուտքին և Հյուսիսը Հարավին կապող առանցքներ, անքակտելի են: Այդ իսկ պատճառով մասնագիտական գրականության մեջ հաճախ հանդիպող ընդհանրական «Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջան» միասնական տերմինը կիրառվում է նաև այս ձեռնարկում՝ «Կովկաս-կասպյան տարածաշրջանը միջազգային հարաբերությունների համատեքստում» դասընթացի շրջանակներում:

Աշխարհագրական չափորոշիչների հետ մեկտեղ կանոթ են Կովկաս-կասպյան տարածաշրջանը բնորոշող երկրագիտական, աշխարհաքաղաքական, պատմամշակութային և քաղաքակրթական հատկանիշներն ու ընդհանրությունները: Եվրասիական մայրցամաքի երկու հնագույն՝ ասիական և եվրոպական քաղաքակրթական աշխարհները միավորող այս տարածաշրջանը քրիստոնեական, մուսուլմանական, բուդդայական քաղաքակրթությունների խաչմերկները հանգուցողն է: Տարածաշրջանի քաղաքական և էթնիկ քարտեզը բազմաթիվ անգամ փոփոխությունների է ենթարկվել. այն բավական բարդ և բազմաշերտ է թե՛ էթնոգավանական, թե՛ քաղաքական թե՛ սոցիալ-մշակութային տեսանկյունից:

Որպես Արևելք-Արևմուտք, Հարավ-Հյուսիս աշխարհաքաղաքական կարևոր տարանցիկ խաչմերուկ՝ Կովկասյան-կասպյան տարածաշրջանի դերը, թե՛ հնում, թե՛ ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումներում պայմանավորված է նրա ուրույն ռազմավարական դիրքով, տարանցիկ-հաղորդակցային, իսկ արդի շրջանում՝ նաև էներգետիկ ներուժով:

Տրանսպորտային տարանցիկ հաղորդակցության ուղիները, ածխաջրածնային, բնական և կենսաբանական պաշարներով հարուստ այս տարածաշրջանը կարևոր աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական առանցք է: Այստեղ են հատվում նաև ժամանակակից ինտեգրացիոն՝ ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ՇՀԿ, ՆԱՏՕ, ԵՄ, ԱՊՀ կառույցների ռազմավարական շահերը:

Կովկաս-կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նշանակությունն առավելապես հիմնված է էներգետիկ-հաղորդակցային բաղադրիչի վրա, ինչն էլ հանգեցնում է տարածաշրջանում ներքին և արտաքին ուժային բևեռների միջև ազդեցության գոտիների տարրոշման, ինտենսիվ մրցակցության, ինտեգրացիոն գործընթացների ակտիվացման:

Տարածաշրջանային անվտանգության համալիրների տեսության համապատկերում, հիմք ընդունելով անվտանգության փոխազդեցություններն ու առնչությունները, Հարավային Կովկասը և Կենտրոնական Ասիան հետխորհրդային տարածաշրջանային անվտանգության համալիրի ենթահամալիրներ են, որոնցում պետությունների միջև անվտանգության փոխազդեցություններն ուրույն բնույթ ունեն: Գիտական գրականության մեջ Կենտրոնական Ասիան և Հարավային Կովկասը դիտարկվում են հետխորհրդային անվտանգության համակարգի ենթահամալիրներ, որոնց ձևավորման հիմքում ընկած է էներգետիկ-հաղորդակցային գործոնով պայմանավորված ներքին միասնականությունը և ընդհանրությունը, ուստի դասընթացում այդ ենթահամալիրները նույնպես դիտարկում ենք որպես մեկ միասնական ընդհանրություն: Այդ տեսանկյունից՝ Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանը համարում

ենք աշխարհատնտեսական տարածաշրջան, որտեղ կովկասյան և կենտրոնասիական ենթատարածաշրջանները կազմում են մեկ ընդհանրական տարածաշրջանի ենթահամակարգեր:

Պատմականորեն տարածաշրջանը եղել է ոչ միայն աշխույժ առևտրային տարանցիկ՝ ի դեմս «Մետաքսի ճանապարհի», այլ նաև՝ Արևմուտքի և Արևելքի միջև միջազգային կապերի հաստատման կարևոր հարթակ: Պատմության նոր շրջանում այն միջանկյալ գոտու դեր է խաղացել մի կողմից Ռուսաստանի և Օսմանյան կայսրության, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև:

Շուրջ երկու դար Կասպից ծովն իր բոլոր ռեսուրսներով պատկանել է Ռուսական կայսրությանը և Պարսկաստանին, ապա գտնվել է ԽՍՀՄ-ի և Իրանի տնօրինման տակ: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերն էապես կերպափոխվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, որի արդյունքում այն ներգրավվեց գլոբալիզացիոն և ինտեգրացիոն նոր գործընթացներում: ԽՍՀՄ փլուզումից հետո 1991 թ. սկսվեց Կովկաս-կասպյան նոր տարածաշրջանի ձևավորումը որպես ինքնուրույն ընդհանրություն, որի արդյունքում փոխվեց նաև այդ տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունը: Տարածաշրջանի խորհրդային հանրապետությունների անկախության ձեռք բերմամբ՝ վարչական սահմանները դարձան պետական սահմաններ. ակիզբ դրվեց պետականաշինությանն ու ինքնուրույն տնտեսական վերակառուցմանը:

Տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացներում իր ուրույն տեղն ունի Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը: ԽՍՀՄ փլուզումից հետո մերձկասպյան բոլոր պետությունները բախվեցին մի շարք խնդիրների և առաջին հերթին Կասպից ծովի միջազգային-իրավական կարգավիճակի հիմնախնդրին: Նախկին ռուս-պարսկական և խորհրդայինական պայմանագրերը, նորանկախ պետությունների տեսանկյունից չէին համապատասխանում նոր իրավիճակին, առավել ևս չէին կարգավորում ծովի ածխաջրածնային պաշարների շահագործման խնդիրները: Կասպյան տարածաշրջանում թափ առավ

Էներգակիրների արդյունահանման նոր գործընթաց, որը նորանկախ պետությունների տնտեսությունների կայացման և զարգացման հիմնական աղբյուրն էր, ինչն էլ մեծապես կանխորոշեց տարածաշրջանի աշխարհաքաղաքական հետագա զարգացումները: Նորանկախ հանրապետությունների տնտեսական կայացման մրցավազքում Կասպիցն աստիճանաբար վերածվեց «նավթի ծովի»՝ երկրորդական պլան մղելով ծովի էկոհամակարգի խնդիրները՝ հանգեցնելով նաև ավագանի պետությունների ռազմականացմանն ու սպառազինությունների մրցավազքի:

Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետությունների անկախացումը արմատապես վերափոխեց տարածաշրջանային և արտատարածաշրջանային առանցքային պետությունների քաղաքականությունն այս երկրամասում: Ռուսաստանը, ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Չինաստանը, ապա նաև՝ Իրանն ու Թուրքիան տարածաշրջանը դիտարկում են որպես աշխարհաքաղաքական, ռազմավարական կարևոր հենակետ և մրցակցում են ազդեցության գոտիների հստակեցման շուրջ: Տարածաշրջանի միջազգային հարաբերությունների վրա ուղղակիորեն ազդում են էներգակիրների տեղափոխման խնդիրները արտաքին շուկաներ, ինչպես նաև տարածաշրջանի երկրների արտաքին քաղաքական տարբեր կողմնորոշումները:

Տարածաշրջանը սահմանակցում է անկայուն Մերձավոր Արևելքին, որն այն վերածում է գլոբալ ուժային կենտրոնների միջև աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական մրցակցության և առճակատման անկայունության գոտու: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, ինչպես նաև լարվածության պարունակող ադրբեջանաիրանական, վրաց-ռուսական հարաբերությունները, աֆղանական ճգնաժամը նույնպես վկայում են տարածաշրջանային անվտանգության բարձր խոցելիության մասին:

XVIII դարասկզբից ի վեր տարածաշրջանը համարվել է Ռուսական կայսրության կենսական շահերի գոտի և այս հիմնարար սկզբունքը օրինաչափ է մնացել մինչ օրս Ռուսաստանի

աշխարհաքաղաքական շահերի և անվտանգության համակարգի համար: Այն է՝ թույլ չտալ այլ պետության գերակայության հաստատումն այստեղ և տարածաշրջանը հնարավորինս ենթարկել ռուսական ռազմաքաղաքական ազդեցությանը: Այսուհանդերձ, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տարածաշրջանի վրա արևմտյան ներգործությունն էապես աճեց: Կասպյան տարածաշրջանը լուրջ հետաքրքրություն է ներկայացնում արևմտյան տերությունների նավթարդյունահանող խոշոր ընկերությունների համար: ԱՄՆ-ի և Եվրոպայի համար կարևոր են ոչ միայն տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսները, այլ նաև նրա ռազմավարական դիրքը, տարանցիկ ներուժը: Վերջիններիս աշխարհաքաղաքական շահերից է բխում տարածաշրջանի նորանկախ հանրապետությունների նկատմամբ Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի ազդեցության թուլացումը:

Չինաստանն այս տարածաշրջանի նկատմամբ իր արտաքին քաղաքական գերակայությունները ձևավորել է աստիճանաբար: Չինաստանի էներգետիկ ծավալապաշտությանը նախորդել է «փափուկ ուժի» ակտիվ քաղաքականությունը, ինչը տարածաշրջանի նորանկախ պետությունների արտաքին քաղաքականությունը զգալիորեն շեղեց դեպի Չինաստան: Ներկայումս Չինաստանը առևտրատնտեսական և էներգետիկ ոլորտներում տարածաշրջանային պետությունների հետ հարաբերություններում առաջատար դիրք է զբաղեցնում՝ հաջողությամբ իրագործելով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը:

Դասընթացում հատուկ անդրադարձ է կատարվում ՀՀ էներգետիկ անվտանգության շահերին՝ տարածաշրջանային էներգետիկ միջանցքների, էներգակիրների փոխադրման աշխարհագրական ուղիների, էներգետիկ ոլորտում Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան և Ռուսաստան-Իրան համագործակցության համատեքստում: Դասընթացի արդիականությունը կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային անվտանգային համակարգի, ՀՀ արտաքին հարաբերությունների և տնտեսական

հիմնախնդիրների մի շարք հանգուցային հարցերի քննության տեսանկյունից:

### ***Դասընթացի գործնական-կիրառական նշանակությունը***

Դասընթացը նախատեսված է մագիստրատուրայի ուսանողների համար՝ մեկ ուսումնական կիսամյակ տևողությամբ, որից 16 շաբաթը՝ տեսական և գործնական պարապմունքների, 4 շաբաթը՝ քննաշրջանի համար: Ուսանողի լսարանային բեռնվածությունը շաբաթական կազմում է 2ակադեմիական ժամ: Ծրագիրն ընդգրկում է 10 թեմա՝ 32 ժամ, որից 20 ժամը դասախոսություն, 12 ժամը գործնական պարապմունք և 2 միջանկյալ քննություն՝ գրավոր և բանավոր: Դասընթացի վերջնարդյունքների ամփոփումը կատարվում է եզրափակիչ քննությամբ:

### ***Դասընթացի նպատակն է՝***

- Ուսանողին համակարգված գիտելիքներ հաղորդել Կովկաս-կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նշանակության ու կարևորության, տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացման հիմնական փուլերի մասին:
- Ուսանողին համակողմանի ներկայացնել տարածաշրջանում միջազգային հարաբերությունների կերպափոխումների դինամիկան արդի փուլում՝ քննարկելով գլոբալ ուժային կենտրոնների /ԱՄՆ, ԵՄ, ՌԴ, Չինաստան/ և տարածաշրջանային տերությունների /Թուրքիայի, Իրանի/ քաղաքականության առանձնահատկությունները, դիրքորոշումներն ու ռազմավարությունները:
- Ուսանողին ներկայացնել տարածաշրջանի պետությունների քաղաքական և տնտեսական ներուժը, արտաքին քաղաքական

առանցքային ուղենիշները, միջպետական հարաբերությունների առանձնահատկությունները:

- Ուսանողին հիմնարար գիտելիքներ հաղորդել Կովկաս-կասպյան տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ և տարածաշրջանի անվտանգային համակարգի մասին:
- Ուսանողի մոտ ձևավորել կիրառական հմտություններ, կարողություններ ՀՀ ռազմավարական և անվտանգային շահերի տեսանկյունից տարածաշրջանում ընթացող զարգացումները և աշխարհաքաղաքական գործընթացները վերլուծելու համար:

### ***Դասընթացի մուտքային պահանջներ***

Դասընթացը լիովին ըմբռնելու համար ուսանողը պետք է տիրապետի աշխարհաքաղաքականության հիմնարար սկզբունքներին, իմանա աշխարհաքաղաքականության հիմնական տեսությունները, ինչպես նաև տիրապետի Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի նոր և նորագույն պատմության, միջազգային հարաբերությունների պատմության, աշխարհագրության և մշակույթի վերաբերյալ գիտելիքների:

### ***Չարգացման ենթակա գիտելիքներ և կարողություններ***

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

Ուսանողը կկարողանա՝

- գնահատել և բնորոշել Կովկաս-կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական համակարգի ռազմավարական, էներգետիկ, հաղորդակցային կարևորությունը,
- բնորոշել և դասակարգել տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացման և տարածաշրջանում միջազգային հարաբերությունների կերպափոխումների առանցքային փուլերը /երկբևեռ և բազմաբևեռ աշխարհակարգերում/,

- հիմնավորված բնութագրել տարածաշրջանի արդի հիմնախնդիրները /կոնֆլիկտային գործոններ, անվտանգության հիմնախնդիրներ, տնտեսական ներուժ, ինտեգրացիոն գործընթացներ/:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

Ուսանողը կկարողանա՝

- տեսական գիտելիքների հիման վրա ինքնուրույն կատարել Կովկաս-կասպյան տարածաշրջանի քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծություններ,
- ներկայացնել տարածաշրջանային պետությունների քաղաքական համակարգերի առանձնահատկությունները և արտաքին քաղաքականության առանձնահատկությունները,
- համակողմանիորեն գնահատել հետխորհրդային տարածքի աշխարհաքաղաքական կերպափոխումներում Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում քաղաքական, տնտեսական և ռազմավարական առանցքների ձևավորման խնդիրները,
- ներկայացնել և վերլուծել տարածաշրջանի միջազգային հարաբերությունների առանձնահատկությունները՝ գնահատելով տարածաշրջանում ՀՀ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունները:

*գ. ընդհանրական կարողություններ*

Ուսանողը կտիրապետի՝

- տարածաշրջանին առնչվող տարատեսակ աղբյուրներից, փաստագրական, վերլուծական նյութերից պատշաճ ձևով օգտվելու հմտությունների՝ անհրաժեշտ հետազոտական մեթոդների կիրառմամբ,
- կկարողանա պատրաստել թեմատիկ զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական քննարկում:

*Դասընթացի վերջնարդյունքները*

- Ուսանողի մոտ համակողմանի գիտելիքներ ձևավորել ժամանակակից միջազգային հարաբերություններում Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական կարևորության մասին, տարածաշրջանային արդի քաղաքական գործընթացներն ու զարգացումները ՀՀ-ի ազգային անվտանգային շահերի դիտանկյունից գնահատելու համար:
- Ուսանողի մոտ ձևավորել կիրառական հմտություններ՝ տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ վերլուծություններ իրականացնելու համար:

*Դասընթացում կիրառվող մեթոդները*

Դասընթացի մեթոդաբանության հիմքում ընկած են միջգիտակարգային ուսուցման մոտեցումները, պատմավերլուծական, պատմաքաղաքագիտական քննության մեթոդները: Ելնելով դասընթացի թեմաների բազմաշերտ ու բազմակողմ բնույթից՝ ներկայացվող ուսումնական նյութը ենթարկվելու է քննական վերլուծության: Դասընթացի թեմաները ներկայացնելիս կիրառվելու են փաստերի համեմատական-համադրման ուսումնասիրության և պատմահամեմատական մեթոդները, որոնց միջոցով Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունը ներկայացվում և համադրվում է պատմական որոշակի իրադարձությունների և ժամանակահատվածի հետ: Պատմավերլուծական մեթոդի օգնությամբ դասընթացի թեմաների քննությունը հնարավոր է դարձնում նյութի առավել օբյեկտիվ ներկայացումը ժամանակագրական կապի մեջ՝ ըստ պատմական փուլերի, քաղաքական գործընթացների, սոցիալ-մշակութային երևույթների:

Պատմաքաղաքագիտական մեթոդի օժանդակությամբ գնահատվելու են տարածաշրջանի երկրների հասարակական-քաղաքական կյանքի էվոլյացիան՝ ինքնության, սոցիալական առանձնահատկությունների, քաղաքական մշակույթի համատեքստում:

### ***Դասընթացի վարման ձևաչափերը՝***

- դասախոսություն և գործնական պարապմունքներ,
- ինտերակտիվ ներկայացում /PPT ձևաչափով/՝ աղյուսակների, գծապատկերների, քարտեզների կիրառմամբ,
- խմբային աշխատանքներ,
- ուսանողի փոքրածավալ զեկույցներ և ներկայացում /PPT ձևաչափով/,
- քննարկումների, բանավեճերի կազմակերպում:

## **ԴԱՍԸՆԹԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

***Թեմա 1. Կովկաս-կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը. Տարածաշրջանի աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական չափորոշիչները (ներածական դասախոսություն):***

1. Պատմական ակնարկ: Տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացման հիմնական փուլերը:
2. Տարածաշրջանը նոր և նորագույն պատմության շրջաններում (Ռուսական կայսրության տիրապետության հաստատումը: Տարածաշրջանը ԽՍՀՄ-ի կազմում):
3. Տարածաշրջանը միջազգային հարաբերությունների համակարգում ԽՍՀՄ փլուզումից հետո:
4. Կովկաս-կասպյան տարածաշրջան հասկացությունը, բնորոշումը, տարածաշրջանի քաղաքական քարտեզը, աշխարհագրական սահմանները նորագույն պատմության շրջանում:

### ***Վերջնադրույնը***

#### ***Ուսանողը կկարողանա՝***

- բնորոշել տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը,
- ներկայացնել տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացման և տարածաշրջանում միջազգային հարաբերությունների կերպափոխումների առանցքային փուլերը /երկրևեռ և բազմաբևեռ աշխարհակարգերում/,

### ***Գրականություն***

1. Маккиндер Х. Географическая ось истории // Классика геополитики XX век. – М. 2003.
2. Баранов А.В., Вартумян А.А. Политическая регионалистика: Вып. 1-5. - М., 2005.
3. Жильцов С.С., Зонн И.С., Ушков А.М. Геополитика Каспийского региона, М., 2003.

4. Эжиев И. Б., Геополитика Каспийского региона, М., 2007.
5. Гумилев Л. Н., Тысячелетия вокруг Каспия, М., 1993.
6. Алиев С. М., Магамедова А. И., Кавказско-каспийский регион: Новая Евразийская реальность, <https://cyberleninka.ru/article/n/kavkazsko-kaspiyskiy-region-novaya-evraziyskaya-realnost/viewer>
7. Brzezinski Z., The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives. N. Y, 1997.
8. Carlo Frappi, Azad Garibov, The Caspian Sea Chessboard: Geo-Political, Geo-Strategic And Geo-Economic analysis, Milano, 2014.
9. Faultiness of conflict in Central Asia and South Caucasus, Implications for the US. Army, Ed. By Olga Olikier, Thomas S. Szayna, RAND, 2003.

**Թեմա 2. Կասպից ծովի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը:**

1. Կասպից ծովի աշխարհագրական հատկանիշները և էկոհամակարգը:
2. Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի պատմությունը:
3. Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի հիմնախնդիրն արդի փուլում:
4. Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի հիմնախնդիրը մերձկասպյան երկրների ներքին և արտաքին քաղաքականության համատեքստում:
5. Սպառազինությունների մրցավազքը Կասպից ծովում:

**Վերջնարդյունք**

**Ուսանողը կկարողանա՝**

- ներկայացնել Կասպից ծովի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը պատմական զարգացման դիտանկյունից և արդի փուլում,
- բնութագրել մերձկասպյան երկրների դիրքորոշումները, Կասպից ծովի իրավական կարգավիճակի հիմնախնդրում:

**Գրականություն**

1. Արմեն Մանվելյան Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում, Երևան, 2015.
2. Барсегов Ю. Г., Каспий в Международном праве и мировой политике, М., 1998.
3. Жильцов С., И. Зонн, Каспийский регион, Политика, Экономика, сотрудничество, Москва, 2017.
4. Саваськов П. В., Правовой Режим Каспийского моря, Южный фланг СНГ, Центральная Азия, Каспий, Кавказ: возможности и вызовы для России, 2003.
5. Совместное заявление Российской Федерации Исламской Республики Иран по правовому статусу Каспийского моря (Москва, 12 марта 2001 года), [https://www.mid.ru/foreign\\_policy/ecology/-/asset\\_publisher/9jm0ASADm3qm/content/id/3163645](https://www.mid.ru/foreign_policy/ecology/-/asset_publisher/9jm0ASADm3qm/content/id/3163645)
6. О ратификации Соглашения между Республикой Казахстан и Азербайджанской Республикой о разграничении дна Каспийского моря между Республикой Казахстан и Азербайджанской Республикой и Протокола к Соглашению между Республикой Казахстан и Азербайджанской Республикой о разграничении дна Каспийского моря между Республикой Казахстан и Азербайджанской Республикой, [https://tengrinews.kz/zakon/parlament\\_respubliki\\_kazahstan/mejdunapodnyie\\_otnosheniya\\_respubliki\\_kazahstan/id-Z030000457/](https://tengrinews.kz/zakon/parlament_respubliki_kazahstan/mejdunapodnyie_otnosheniya_respubliki_kazahstan/id-Z030000457/)
7. Конвенция о правовом статусе Каспийского моря, <http://kremlin.ru/supplement/5328>
8. Каспий в картах и диаграммах 2, возможности, надежды и проблемы, [https://zoinet.org/wp-content/uploads/2018/02/VitalCaspian\\_RUS\\_lowRES.pdf](https://zoinet.org/wp-content/uploads/2018/02/VitalCaspian_RUS_lowRES.pdf)
9. Bahman A. D., The Law and Politics of the Caspian Sea in the Twenty-First Century: The Positions and Views of Russia, Kazakhstan, Azerbaijan, Turkmenistan, With Special Reference to Iran, Tehran, 2003.

**Թեմա 3. Տարածաշրջանի էներգետիկ և տարանցիկ ներուժը, էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները**

1. Տարածաշրջանի էներգետիկ ներուժը /ածաշրջաճանային պաշարները/:
2. Տարածաշրջանի էներգակիրների փոխադրման աշխարհագրական ուղիները. Համագործակցության և հակազդեցության առանցքները:
3. Հիմնական նավթամուղերը և գազամուղերը:
4. Տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ոլորտում ՀՀ-ի շահերը:

Վերջնարդյունք

Ուսանողը կկարողանա՝

- գնահատել Կասպից ծովի տնտեսական ներուժը, էներգետիկ անվտանգության հիմնահարցերը,
- բնութագրել Կասպիական էներգակիրների փոխադրման ուղիների աշխարհաքաղաքական նշանակությունն ու առանձնահատկությունները:

Գրականություն

1. Արմեն Սանվելյան Էներգետիկ անվտանգությունը և աշխարհաքաղաքական մարտահրավերները Կովկաս-կասպյան տարածաշրջանում, Երևան, 2015.
2. С. Жильцов, И. Зонн, Каспийский регион, Политика, Экономика, сотрудничество, Москва, 2017.
3. Каспий в картах и диаграммах 2, возможности, надежды и проблемы, [https://zoinet.org/wp-content/uploads/2018/02/VitalCaspian\\_RUS\\_lowRES.pdf](https://zoinet.org/wp-content/uploads/2018/02/VitalCaspian_RUS_lowRES.pdf)
4. Нефть и газ Каспийского море: между Европой и Азией, Рабочая тетрадь, РСМД, N 39, М., 2017.
5. Challenges of the Caspian Resource Boom, Domestic Elites and Policy-Making, Ed. By Andreas Heinrich and Heiko Pleins, The Centre for Euro-Asian Studies, palgrave Macmillan, 2012.

6. BP Statistical Review of World Energy, <https://www.bp.com/en/global/corporate/energy-economics/statistical-review-of-world-energy.html>
7. Cohen Ariel, “The New Great game”: Pipeline Politics in Eurasia. “Caspian Crossroad” Magazin, 1996, Spring-Summer, Vol. 2, Issue 1.

**Թեմա 4. Տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների պայքարը Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում ազդեցության հաստատման համար:**

1. Կովկաս-կասպյան տարածաշրջանն արդի միջազգային հարաբերություններում՝ որպես Արևելք-Արևմուտք, Հարավ-Հյուսիս առանցք և աճիսաջրաճանային պաշարներով հարուստ տարածաշրջան, միջազգային տրանսպորտային կարևոր խաչմերուկ:
2. Աշխարհաքաղաքական բևեռների կողմից հետխորհրդային պետություններին սեփական ազդեցության ոլորտ ներառելու, տարածաշրջանը ռազմավարական, հաղորդակցային հենակետի վերածելու գործընթացները տարածաշրջանում:
3. Տարածաշրջանի կոնֆլիկտային օջախների ազդեցությունը միջազգային հարաբերությունների և տարածաշրջանային անվտանգության վրա:
4. Միջազգային տրանսպորտային և էներգետիկ միջանցքներին ՀՀ-ի ինտեգրման հնարավորություններն ու խոչընդոտները:

Վերջնարդյունք

Ուսանողը կկարողանա՝

- համակողմանիորեն գնահատել հետխորհրդային տարածքի աշխարհաքաղաքական կերպափոխումներում տարածաշրջանում քաղաքական և տնտեսական աշխարհաքաղաքական նոր առանցքների ձևավորման խնդիրները,
- բնորոշել տարածաշրջանային էներգետիկ և տրանսպորտային ծրագրերից ՀՀ-ի մեկուսացման պատճառներն ու հետևանքները:

Գրականություն

1. Гаджиев К. С., Геополитика Кавказа, М., Международные отношения, М., 2001.
2. Международные отношения в Центральной Азии, События и документы, под редакцией А.Д. Богатурова, Москва, 2014.
3. Гегелашвили Н.А. Каспийский регион в российско-американских отношениях. М., 2009.
4. Жильцов С. С., Политика России в Каспийском регионе, М., 2016.
5. Carlo Frappi, Azad Garibov, The Caspian Sea Chessboard: Geo-Political, Geo-Strategic And Geo-Economic analysis, Milano, 2014.
6. Faultiness of conflict in Central Asia and South Caucasus, Implications for the US. Army, Ed. By Olga Olikier, Thomas S. Szayna, RAND, 2003.

**Թեմա 5. Կասպիական-Կենտրոնասիական տարածաշրջանը ՌԴ արտաքին քաղաքական շահերի և հետաքրքրությունների համատեքստում:**

1. ՌԴ տարածաշրջանային քաղաքականության էվոլյուցիան և աշխարհաքաղաքական առաջնահերթությունների կերպափոխումները ԽՍՀՄ փլուզումից հետո:
2. ՌԴ ռազմաքաղաքական ազդեցության վերականգնման և ընդլայնման միտումները տարածաշրջանում:
3. ՌԴ քաղաքականությունը Կովկաս-կասպյան տարածաշրջանի երկրների նկատմամբ:

Վերջնարդյունք

*Ուսանողը կկարողանա՝*

- բնորոշել ՌԴ տարածաշրջանային քաղաքականության էվոլյուցիան,
- վերլուծել ՌԴ աշխարհաքաղաքական առաջնահերթությունները և ռազմաքաղաքական ազդեցության ընդլայնման պատճառները տարածաշրջանում:

Չրականություն

7. Гаджиев К.С., Геополитические горизонты России: контуры нового миропорядка. 2-е изд. испр. и доп. М., Экономика, 2011
8. Гаджиев К. С., Геополитика Кавказа, М., Международные отношения
9. Гегелашвили Н.А. Каспийский регион в российско-американских отношениях. М., 2009.
10. Жильцов С. С., Политика России в Каспийском регионе, М., 2016.
11. Киракосьян М. А., Русский флаг на Каспии, М., 2013.
12. Жильцов С., И. Зонн, Каспийский регион, Политика, Экономика, сотрудничество, Москва, 2017.
13. Саваськов П. В., Правовой Режим Каспийского моря, Южный фланг СНГ, Центральная Азия, Каспий, Кавказ: возможности и вызовы для России, 2003.
14. Evgeny F. Troitskiy, Central Asian Regional Security Complex: The Impact of Russian and US Policies, Global Society, 2014.

**Թեմա 6. ԱՄՆ, ԵՄ քաղաքականությունը Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:**

1. Տարածաշրջանի դերն ու նշանակությունն ԱՄՆ-ի Մեծ Մերձավոր Արևելքի հայեցակարգում:
2. ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական ուղենիշները Հարավային Կովկասի, Մերձկասպյան, Կենտրոնական Ասիայի պետությունների հետ հարաբերություններում:
3. ԵՄ էներգետիկ քաղաքականությունը տարածաշրջանում և տնտեսական, քաղաքական ինտեգրացիոն ծրագրերը:

Վերջնարդյունք

*Ուսանողը կկարողանա՝*

- համակողմանի ներկայացնել տարածաշրջանում ԱՄՆ և ԵՄ քաղաքականության կերպափոխումների դինամիկան,
- բնութագրել ԱՄՆ և ԵՄ ռազմավարությունները տարածաշրջանի անվտանգային համակարգում:

Գրականություն

1. Жильцов С.С., Зонн И.С., США в погоне за Каспием, М., 2009.
2. Гаджиев К.Геополитические ориентиры США на Южном Кавказе, [https://www.imemo.ru/files/File/magazines/rossia\\_i\\_novay/2019\\_03/Geopoliticheskiye\\_Gadjiev.pdf](https://www.imemo.ru/files/File/magazines/rossia_i_novay/2019_03/Geopoliticheskiye_Gadjiev.pdf)
3. ДарабадиП., Кавказ и Каспий в мировой истории и геополитике XXI века, М., 2010.
4. Гегелашвили Н., Политика ЕС и США в Большом Черноморско-Каспийском регионе, [https://www.imemo.ru/files/File/magazines/rossia\\_i\\_novay/2012\\_02/N\\_GEG\\_politic.pdf](https://www.imemo.ru/files/File/magazines/rossia_i_novay/2012_02/N_GEG_politic.pdf)
5. Evgeny F. Troitskiy, Central Asian Regional Security Complex: The Impact of Russian and US Policies, Global Society, 2014.
6. Central Asia and The Caucasus, At the Crossroads of Eurasia in the 21st Century, Ed. By Werner Hermann, Johannes F. Linn, SAGE, 2011, 232 p.
7. Amy Jaffe, US policy towards the Caspian region: can the wish-list be realized?. <http://www.amymyersjaffe.com/content/pdf/wish-list.pdf>
8. Marco Valigi, Caspian Security Issues: Conflict, Cooperation and Energy Supplies, Jun 28, 2015.

**Թեմա 7. Իրանի Իսլամական Հանրապետությունն (ԻԻՀ) և Թուրքիայի հանրապետության արտաքին քաղաքական շահերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում:**

1. Թուրքիայի արտաքին քաղաքականության բնորոշ գծերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում. «Թյուրքական աշխարհ» հայեցակարգի ձեռքբերումներն ու ձախողումները:
2. Իրանի աշխարհառազմավարական առաջնահերթությունները տարածաշրջանում:
3. Իրանի և Թուրքիայի դերը տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացներում:

4. Իրանը և Թուրքիան որպես տարածաշրջանային մրցակցող էներգետիկ և տրանսպորտային տարանցիկ խաչմերուկներ:

Վերջնադրույնը

*Ուսանողը կկարողանա՝*

- հասկանալ տարածաշրջանային առանցքայի տերությունների՝ Թուրքիայի և Իրանի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները,
- գնահատել Իրանի և Թուրքիան մրցակցային պայքարը տարածաշրջանային էներգետիկ և տրանսպորտային տարանցիկ խաչմերուկների նկատմամբ գերակայություն հաստատելու հարցում:

Գրականություն

1. Սաֆրաստյան Ռ., Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. Աշխարհառազմավարական զինադադար, «21-րդ ԴԱԸ», թիվ 4 (10), 2005թ., էջ 34-46:
2. Հովսեփյան Լ., Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 1990-ական թթ. որպես եվրասիական քաղաքականության կարևորագույն ուղղություն. ձեռքբերում թե՞ ձախողում:
3. Թերզյան Ա., Հարավային Կովկասը Եվրամիության էներգետիկ անվտանգության քաղաքականության համատեքստում, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (53), 2014թ., էջ 57-82:
4. Դավթյան Է., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ համագործակցությունը (1991-2016 թթ.) աստենախոսություն, Երևան, 2018:
5. Նավասարդյան Ն., Ղազվին-Ռաշթ-Սարաբա երկաթգիծն Իրանի երկաթուղային տարանցիկ միջանցքի խաչմերուկում, Ժամանակակից Եվրասիա, VI (2), Երևան, 2017:
6. Быстров А. К., Проблемы транспортной инфраструктуры и экологии в Каспийском регионе, М., 2009.
7. Овсеян Л., Турецкая модель и обусловленность внешней политики Анкары в странах Центральной Азии стратегическими

интересами Запада, [http://www.ca-c.org/online/2009/journal\\_rus/cac-02/12.shtml?fbclid=IwAR1QV6TOADAUtJ6ha17-0dZ9H7pyss5ZZTttis9mg1fEQ\\_Q54Oc0XN\\_odcA](http://www.ca-c.org/online/2009/journal_rus/cac-02/12.shtml?fbclid=IwAR1QV6TOADAUtJ6ha17-0dZ9H7pyss5ZZTttis9mg1fEQ_Q54Oc0XN_odcA)

8. Казанцев А.А. Политика стран Запада в Центральной Азии: ключевые характеристики, дилеммы и противоречия. М., 2009
9. Brenda Shaffer, Iran's Role in the South Caucasus and Caspian Region: Diverging Views of the U.S. and Europe, <http://ams.hi.is/wp-content/uploads/2014/03/Shaeffer-Brenda.pdf>
10. The Security of the Caspian Sea Region, (SIPRI Monograph Series) 1st Edition, Ed. Gennady Chufrin, 2001.

**Թեմա 8. Չինաստանի աշխարհառազմավարական շահերն ու ազդեցությունը տարածաշրջանում:**

1. Տարածաշրջանը որպես աշխարհաքաղաքական մրցակիցների հակազդելու չինական աշխարհառազմավարական հենակետ:
2. Չինաստանի տարածաշրջանային «փափուկ ուժի» քաղաքականության բնորոշ գծերը. էներգետիկ և տարանցիկ հիմնախնդիրների վերափոխումը ռազմաքաղաքական հակազդեցության:
3. «Մետաքսի ճանապարհ» չինական ծրագրի հեռանկարները Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:
4. Մինցզյան-Ուլդուրական ինքնավար շրջանի հիմնախնդիրը տարածաշրջանային անվտանգության համակարգում:

**Վերջնարդյունք**

**Ուսանողը կկարողանա՝**

- բնորոշել Չինաստանի տարածաշրջանային փափուկ ուժի քաղաքականությունը:
- բնութագրել «Մետաքսի ճանապարհ» չինական ծրագրի աշխարհաքաղաքական նշանակությունը:

**Գրականություն**

1. Международные отношения в Центральной Азии, События и документы, под редакцией А.Д. Богатурова, Москва, 2014.

2. Дарабади П., Кавказ и Каспий в мировой истории и геополитике XXI века, М., 2010.
3. Д. Бабаян, Политика Китая в Центральной Азии на Кавказе и Северном прикаспии в конце XX-XXI века, Москва, 2013, 327 с.
4. Казанцев А.А., «Большая игра» с неизвестными правилами: мировая политика и Центральная Азия, М., 2008.
5. Nina Miholjic, Trans-Caspian International Transportation Route: A Way to Steadfast Economic Development and Connectivity in the South Caucasus and Central Asia, [https://www.researchgate.net/publication/332876821\\_Trans-Caspian\\_International\\_Transportation\\_Route\\_A\\_Way\\_to\\_Steadfast\\_Economic\\_Development\\_and\\_Connectivity\\_in\\_the\\_South\\_Caucasus\\_and\\_Central\\_Asia/link/5cd02062299bf14d957b351e/download](https://www.researchgate.net/publication/332876821_Trans-Caspian_International_Transportation_Route_A_Way_to_Steadfast_Economic_Development_and_Connectivity_in_the_South_Caucasus_and_Central_Asia/link/5cd02062299bf14d957b351e/download)
6. New Economic Corridors in the South Caucasus and the Chinese One Belt One Road, <https://epfarmeria.am/document/New-Economic-Corridors-in-South-Caucasus-and-Chinese-OBOR>
7. Nurlan Aliyev, China's Soft Power in the South Caucasus, <https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13604-chinas-soft-power-in-the-south-caucasus.html>

**Թեմա 9. Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերի կայացման գործընթացը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:**

1. Հետխորհրդային հանրապետությունների քաղաքական համակարգերի բնորոշ գծերը ու կերպափոխումները:
2. Տարածաշրջանի երկրների միջպետական հարաբերությունների դինամիկան, գլոբալ կենտրոնների հետ հարաբերությունները և արտաքին քաղաքական կողմնորոշումները:
3. Տարածաշրջանի երկրներում ժողովրդավարական մոդելի կայացման գործընթացները. ձեռքբերումներ և ձախողումներ:
4. Հակամարտությունները և անվտանգության խնդիրները տարածաշրջանում:

- Ղարաբաղյան հակամարտության ազդեցությունը տարածաշրջանի միջազգային հարաբերությունների վրա:
- Ռուս-վրացական հարաբերությունների դինամիկան տարածաշրջանային անվտանգության համակարգում. արտաքին գործոն:
- Ֆերգանայի դաշտավայրի /հովտի հիմնախնդիրը. Ուզբեկստան-Տաջիկստան-Ղրղզստան եռանկյունու հակասությունները և տարածաշրջանային անվտանգության սպառնալիքները՝ անկլավների հիմնահարցը, ծայրահեղ իսլամական կարգակերպությունները և ահաբեկչություն, ջրօգտագործման խնդիրը, թմրանյութերի տարածում և տարանցիկության խնդիրը:
- Աֆղանական ճգնաժամի ազդեցությունը տարածաշրջանի և սահմանակից պետությունների անվտանգային համակարգի վրա:

Վերջնարդյունք

*Ուսանողը կկարողանա՝*

- պատկերացնել տարածաշրջանային պետությունների քաղաքական համակարգերի առանձնահատկությունները,
- բնութագրել տարածաշրջանի անվտանգային համակարգի կոնֆլիկտոզեն օջախները, սպառնալիքներն ու մարտահրավերները:

Գրականություն

1. ԱրաքսՓաշայան, Իսլամնադրբեջանում. անցյալը և ներկա, Երևան, 2014.
2. Казанцев А.А., «Большая игра» с неизвестными правилами: мировая политика и Центральная Азия, М., 2008.
3. Международные отношения в Центральной Азии, События и документы, под редакцией А.Д. Богатурова, Москва, 2014.
4. Поляков К. И., Исламский экстремизм в Центральной Азии, Москва, 2014.
5. Центральная Азия на рубеже XX–XXI веков: политика, экономика, безопасность, учебное пособие, Екатеринбург, 2017.

6. Central Asia and The Caucasus, At the Crossroads of Eurasia in the 21st Century, Ed. By Werner Hermann, Johannes F. Linn, SAGE, 2011.
7. Marlene Laruelle and Sebastien Peyrouse, Globalizing Central Asia, Geopolitics and the Challenges of Economic Development, Armonk, New York, London, 2013.

**Թեմա 10. Ինտեգրացիոն գործընթացները Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:**

1. Տարածաշրջանի երկրների և միջազգային ինտեգրացիոն կառույցների միջև հարաբերությունները:
2. Տարածաշրջանային պետությունների ներգրավվածության մակարդակը եվրասիական տարածքի և եվրասիական կառույցներում (ԵԱՏՄ, ԵՄ, ՇՀԿ, ՀԱՊԿ, ՆԱՏՕևայլն):
3. ԵԱՏՄ և ՀԱՊԿ-ի անդամ տարածաշրջանային երկրների և ՀՀ միջև համագործակցության հիմնական միտումներն ու հեռանկարները:

Վերջնարդյունք

*Ուսանողը կկարողանա՝*

- ներկայացնել և վերլուծել տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացները՝ իմաստավորելով տարածաշրջանում ՀՀ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունները:

Գրականություն

1. Аббасбейли А.Н. Проблемы военно-политической безопасности стран каспийского бассейна// Каспийский регион: политика, экономика, культура. —2007. - № 4.
2. Казанцев А.А., «Большая игра» с неизвестными правилами: мировая политика и Центральная Азия, М., 2008.
3. Юрьева Т. В. Политика НАТО в отношении Центральной Азии и Закавказья // Южный фланг СНГ. Центральная Азия—Каспий—Кавказ. - М., 2003
4. Международные отношения в Центральной Азии, События и документы, под редакцией А.Д. Богатурова, Москва, 2014.

5. Салыгин В.И. Глобальная энергетическая безопасность и внешняя энергетическая политика России, [http://www.rfej.ru/rvv/id/90041E3BC/\\$file/11-33.pdf](http://www.rfej.ru/rvv/id/90041E3BC/$file/11-33.pdf)
6. Селезнев И., На страже коллективной безопасности Центральной Азии, [https://www.imemo.ru/files/File/magazines/rossia\\_i\\_novay/2018\\_02/13\\_Seleznev.pdf](https://www.imemo.ru/files/File/magazines/rossia_i_novay/2018_02/13_Seleznev.pdf)
7. Prospects for Regional Integration in Central Asia, Fatema Z. Sumar, Bureau of South and Central Asian Affairs George Washington University, October 28, 2014, <http://www.state.gov/p/sca/rls/rmks/2014/233577.htm>.
8. The South Caucasus Between integration and fragmentation, [https://www.files.ethz.ch/isn/191505/pub\\_5598\\_the\\_south\\_caucasus\\_-\\_between\\_integration\\_and\\_fragmentation.pdf](https://www.files.ethz.ch/isn/191505/pub_5598_the_south_caucasus_-_between_integration_and_fragmentation.pdf)
9. Vladimir Papava, Eldar Ismailov, A new concept for the Caucasus, [https://www.researchgate.net/publication/229053190\\_A\\_new\\_concept\\_for\\_the\\_Caucasus](https://www.researchgate.net/publication/229053190_A_new_concept_for_the_Caucasus)

ԺԱՄԱՔԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄ՝ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

N	Թեմա	Պարապունքների տիպը, ժամերի թիվը	
		Դասախոսություն	Մեմինար, գործնական
Թեմա 1.	<u>Դասախոսություն</u> Կովկաս-կասպյան տարածաշրջանն աշխարհաքաղաքական կառուցվածքը. տարածաշրջանի աշխարհաքաղական և աշխարհառազմավարական չափորոշիչները:	2	
Թեմա 2.	<u>Դասախոսություն</u> Կասպից ծովի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը:	2	

Թեմա 3.	<b><u>Դասախոսություն</u></b> Տարածաշրջանի էներգետիկ և տարանցիկ ներուժը, էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները:	2	
	Մեմինար թեմա 1-3		2
Թեմա 4.	<b><u>Դասախոսություն</u></b> Տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների պայքարը Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում ազդեցության հաստատման համար:	2	
	Միջանկյալ բանավոր քննություն		
Թեմա 5.	<b><u>Դասախոսություն</u></b> Կասպիական-կենտրոնասիական տարածաշրջանը ՌԴ արտաքին քաղաքական շահերի և հետաքրքրությունների համատեքստում:	2	
Թեմա 6.	<b><u>Դասախոսություն</u></b> ԱՄՆ, ԵՄ քաղաքականությունը Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:	2	
	Գործնական պարապմունք թեմա՝ 4-6		2
Թեմա 7.	<b><u>Դասախոսություն</u></b> Իրանի Իսլամական Հանրապետությունն (ԻԻՀ) և Թուրքիայի արտաքին քաղաքական շահերը Կովկաս-կասպյան տարածաշրջանում:	2	
	Գործնական պարապմունք թեմա՝ 6-7		2
Թեմա 8.	Չինաստանի աշխարհառազմավարական շահերն ու ազդեցությունը տարածաշրջանում:	2	
	Գործնական պարապմունք թեմա՝ 8		2

Թեմա 9.	Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական մակրոտարածաշրջանի երկրների քաղաքական համակարգերի կայացման գործընթացը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:	2	
	Գործնական պարապմունք թեմա՝ 9		2
Թեմա 10.	Ինտեգրացիոն գործընթացները Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:	2	
	Մեմինար թեմա՝ 4-10		2
Ընդամենը	32 ժամ	20	12
	Միջանկյալ գրավոր քննություն թեմա՝ 7-10		
	Անփոփիչ բանավոր քննություն թեմա՝ 1-10		

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԿԱՆ

1. Աշխարհագրաբանական իրադրությունը Կովկասյան-կասպյան տարածաշրջանում ևՄՀՄ փլուզումից հետո:
2. Կասպից ծովի իրավական կարգավիճակին առնչվող խորհրդային անանական պայմանագրերը:
3. Կասպից ծովի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը արդի փուլում:
4. Կասպից ծովի ռազմականացման հիմնախնդիրը և անվտանգային համակարգը:
5. ԻԻՀ դիրքորոշումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի նկատմամբ:
6. ՌԴ դիրքորոշումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի նկատմամբ:
7. ԵՄ Էներգետիկ քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում:
8. ՄՄՀ Էներգետիկ քաղաքականությունը Կովկաս-կասպյան տարածաշրջանում:
9. Կենտրոնաօսիական Էներգետիկ հոսքերի փոխադրման աշխարհագրական ուղիների առանձնահատկությունները, հյուսիսային (ռուսական), հարավային (իրանապակիստանյան), կենտրոնական (կովկասյան), արևելյան (չինական):
10. Կասպյան ածխաջրածինների արտահանման կովկասյան ուղղությունները (նավթամուղներ, գազամուղներ):
11. Կասպյան ածխաջրածինների արտահանման շինական ուղղությունը (նավթամուղներ, գազամուղներ):
12. Իրանը և Թուրքիան որպես Կասպյան Էներգետիկ իրենցի տարանցիկ ուղիներ:
13. Իրանի ռազմավարական շահերը Կովկաս-կասպյան և Կենտրոնաօսիական տարածաշրջանում:
14. Թուրքիայի քաղաքականությունը Կովկաս-կասպյան և Կենտրոնաօսիական տարածաշրջանում:

15. Բաքու-Թբիլիսի-Ջեիհան գազատարի աշխարհաքաղաքական նշանակությունը:
16. Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը և նրա աշխարհաքաղաքական նշանակությունը:
17. «Խողովակաշարերի պատերազմը» տարածաշրջանային Էներգետիկ անվտանգության համակարգում և արդիքնաաթուրքական TANAP ծրագրի մասին:
18. ՀՀ ներգրավվածությունը տարածաշրջանային Էներգետիկ ոլորտում:
19. Արցախյան հակամարտությունը տարածաշրջանային անվտանգության համակարգի կերպափոխիչ գործոն:
20. Արևմտական իսլամի հիմնախնդիրը Կովկասյան-կասպյան և Կենտրոնաօսիական տարածաշրջանում:
21. Ուզբեկստանի քաղաքական համակարգի առանձնահատկությունները և տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունները:
22. Թուրքմենստանի քաղաքական համակարգը. չեզոքության ուղեգծի էությունը:
23. Տարածաշրջանի երկրների և վիճազգային ինտեգրացիոն կառույցների միջև հարաբերությունները (ՀՄԳԿ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ, ԵՀԿ և այլն):
24. Ղազախստանի քաղաքական համակարգի առանձնահատկությունները. արտաքին քաղաքականության բնորոշ գծերը:
25. ՌԴ շահերը և արտաքին քաղաքականության կերպափոխումները Կովկաս-կասպյան և Կենտրոնաօսիական տարածաշրջանում:
26. Տաջիկստանի քաղաքական համակարգի վերափոխումները. Աֆղանական ճգնաժամի ազդեցությունը:
27. Ղորգանական ժողովրդավարական մոդելի կայացման գործընթացը:
28. ՄՄՀ աշխարհաքաղաքական առաջնահերթությունները Կովկաս-կասպյան և Կենտրոնաօսիական տարածաշրջանում:

29. Ֆերգանայի դաշտավայրի հիմնախնդիրը. Ուզբեկստան-Տաջիկստան-Ղրղզստան եռանկյունու հակասությունները:
30. Չինաստանի արտաքին քաղաքականության բնորոշ գծերը Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ**

1. Կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական կերպավորման պատճառներն ու հետևանքները XX դ. վերջ-XXI դ. սկիզբ. Տարածաշրջանը ԽՍՀՄ փլուզումից հետո:
2. Կասպից ծովի միջազգային իրավական կարգավիճակի հիմնախնդիրը:
3. Սպառազինությունների մրցավազքը Կասպից ծովի ավազանում:
4. Էներգետիկ հոսքերի փոխադրման աշխարհագրական ուղիների առանձնահատկությունները Կովկաս-կասպյան տարածաշրջանում:
5. Կասպիական էներգակիրների արտահանման տարանցիկ հիմնական ուղիները աշխարհաքաղաքական արդի գործընթացներում:
6. Չինաստանի «փափուկուժի» քաղաքականությունը Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:
7. Ադրբեջանաթուրքական համագործակցությունը էներգետիկ և տրանսպորտային ոլորտներում Կովկաս-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանում:
8. Կասպիական էներգակիրների հարավային և հյուսիսային էներգետիկ հոսքերը. տարածաշրջանային էներգետիկ համակարգին ՀՀ-ի ինտեգրման հնարավորություններն ու սպառնալիքներ:
9. Շանհայի համագործակցության կազմակերպությունը Կենտրոնասիական տարածաշրջանի անվտանգության համակարգում:

10. ԱՄՆ ռազմաքաղաքական համագործակցությունը Կովկասյան-կասպյան և Կենտրոնասիական տարածաշրջանի երկրների հետ:
11. ՌԴ աշխարհաքաղաքականությունը Կովկասյան-կասպյան տարածաշրջանում:
12. ԵՄ էներգետի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում:
13. Հարավային Կովկասը որպես էներգետիկ և տրանսպորտային հոսքերի խաչմերուկ. ՀՀ էներգետիկ անվտանգության շահերի դիտանկյուն:
14. Արմատական իսլամը Կովկաս-կասպյան տարածաշրջանում. անվտագային համակարգի մարտահրավերն ու սպառնալիքները:
15. Տարածաշրջանային պետությունների ներգրավվածությունը եվրոատլանտյան ինտեգրացիոն կառույցներում (ԵՄ, ՆԱՏՕ):
16. Տարածաշրջանային պետությունների ներգրավվածությունը Եվրասիական ինտեգրացիոն կազմակերպություններում (Շանհայի համագործակցության կազմակերպություն, ՀԱՊԿ, ՆԱՏՕ):
17. Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարերի աշխարհաքաղաքական նշանակությունը. ադրբեջանաթուրքական էներգետիկ քաղաքականությունը տարածաշրջանում:
18. Հարավային Կովկասի էներգետիկ միջանցքի նշանակությունը և ՀՀ էներգետիկ անվտանգության հիմնախնդիրը
19. Կովկաս-կասպյան և կենտրոնասիական տարածաշրջանի ներգրավվածությունը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ջինական նախագծում:

ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ԿՈՎԿԱՍ-ԿԱՍՊԻԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

NAZELI NAVASARDYAN  
THE CAUCASUS-CASPIAN REGION IN THE CONTEXT OF  
INTERNATIONAL RELATIONS

Educational-Methodological Manual

Ստորագրված է տպագրության՝ 24.12.2020թ.  
Չափսը՝ 84x60 1/16: Ծավալը՝ 2.25 տպ. մամուլ:  
Թուղթ՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 100 օր.:

Տպագրված է «Պրինտոգրաֆ» տպագրատանը:  
Երևան, Աբովյան 31, բն. 2